

“ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ”

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԽԷ. ՏԱՐԻ — 1933

Կը խմբագրուի եւ կը հրատարակուի ՄԻՒԹԱՐԵԱՆ ՄԻՆԵՐՆՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԱՆԷ Ի ՎԻԵՆԱՆ աշխատակցութեամբ ազգային եւ օտար Բանասէրներու:

Որպէս զի աւելի մատչելի դառնայ Ուսումնասիրութեան օտարալեզու արեւելագէտներուն, Խմբագրութիւնս շարունակաբար պիտի ներկայացնէ նաեւ կարեւոր բանասիրական յօդուածներուն համառոտ մէկ ամփոփումը, մեջազգային որ եւ է լեզուաւ:

Բաժանորդագիրն է առէն նրկրի Բանար՝ 5 տոլար, կամ յոյն:

Մեր հասցէն՝

REDACTION DE LA REVUE “HANDES AMSORYA,” VIENNE (Autriche), VII., Mechitharistengasse 4.

“ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ” Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԲՈՎ ԿԱՐԵԼԻ Է ՍՏԱՆԱԼ

Դոկտ. Յ. ԹԻՐՆԱՔԵԱՆԻ երկերէն՝

- 1. Հայ երանեան ուսումնասիրութիւնք. Վիեննա 1922, 8°, էջ 192. Տոլար՝ 1.—
2. Համասեր եւ կրկնակ խումբեր. Վիեննա 1923, 8°, էջ 188. Տոլար՝ 1.—

Պրոֆ. Հ. ԱՃԱՌԵԱՆԻ՝

Պատմութիւն Եղիա քահանայի (Ժ-Ղ դար). արտատպուած ԱՐԱՐԱՏ ամսագրից՝ Վաղարշապատ-Վիեննա 1908—1930. 8°, էջ 56. գուրից. Ֆր. 3.—

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Հ Ա Յ Ե Ր Է Ն

Ա Ր Մ Ա Տ Ա Կ Ա Ն Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

ԳՐԵՑ

Հ. ԱՃԱՌԵԱՆ

ՀԱՏՈՐ Ե. ԵՐ Զ.

ԵՐԵՒԱՆ

ՀԱՐԱՆԱԿԱՆ ԵՊԵՎԵՏԻՊ ՏՊԱՐԱՆ 1933

“HANDES AMSORYA”

MONATSSCHRIFT FÜR ARMENISCHE PHILOLOGIE

XLVII. JAHRGANG — 1933

Herausgegeben und redigiert von der MECHITHARISTEN - KONGREGATION IN WIEN unter Mitwirkung zahlreicher Armenisten.

Um unseren nichtarmenischen P. 1. Abonnenten die Benützung unserer Zeitschrift zu erleichtern, werden wir fortlaufend von den wichtigen philologischen Abhandlungen ein kurzes Resumé in einer europäischen Sprache geben.

Preis dieses Jahrganges 5 Dollars.

Unsere Adresse:

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻ 3-6

ՄԱՐՏ-ՅՈՒՆԻՍ

ԽԷ. ՏԱՐԻ 1933

ՄՈՂՍԷՍ Գ. ՏԱԹԵՒՆՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԵՆՆԵՆ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ ՄԱՀՈՒԱՆ 300ԱՄԵԱՅ ՏԱՐԵՎԱՐՁԻՆ ԱՌԹԻԻ

Մայիս 21ին կը բոլորուի Մովսէս Գ. կաթողիկոսի մահուան 300ամեայ տարեդարձը: Ժամանակակիցները կոչած են զինքը «Ներկորդ Լուսաւորիչ Հայոց»: Իսկ Սիմէոն կաթողիկոս Երեւանցի կը ներկայացնէ իր նկարագիրը այսպէս. «Սա էր այլ հոգեւորական, առաքինադարձ եւ բնակարան շնորհաց կալ, առաքինադարձ եւ բնակարան շնորհաց կալ, առաքինադարձ եւ բնակարան շնորհաց կալ, առաքինադարձ եւ բնակարան շնորհաց կալ...»

Պիտի չուզեմ որ սահի այս բարեգէտ օրը, առանց վերջիչեցնելու նոր սերունդին այս մեծ, դարակազմիկ անձնաւորութեան հոգւոյ ազնուութիւնը, նկարագրի ամբողջութիւնը, սրբասնունդ կեանքը եւ ազգօրում գործունէութիւնը: Հայ կեանքի ճգնաժամային օրերու ծնունդն է անիկա, քառսի մէջ ծագած լոյս մը, փրկութեան յոյս ներշնչելու նաւարկեալներուն, առաջնորդ բնակարաններուն, առաջնորդ բնակարաններուն եւ վերածնութեան խթան խաւարի մէջ թարթափողներուն: Օսմանեան տիրապետութեան տակ Հարստահարուած, պարսկական բռնապետութենէն տեղահանուած եւ չորս հոգեւորներու ցրիւ եկած ժողովրդեան միութեան նեցուկ եղաւ անիկա, Սիմէոն կաթողիկոս Երեւանցի, Ձամբա գիւրբ. Վաղարշապատ 1873, էջ 21:

ամայութեան մէջ նոր կեանք վերընծայող Հայր մը, աւերակներու վրայ նոր քաղաքակրթութիւն կառուցանող ճարտարապետ, եղծուած բարբերու բուժիչ եւ հանգած խորաններու վրայ նոր գոհ վերընծայող քահանայապետ. ինչպէս հին Իսրայէլի առաջնորդ անապատներէն, այնպէս համանուն կաթողիկոսն Հայոց Մովսէս Գ. հանեց իւր ժողովուրդը աւերակներու կոյտերէն Աւետեաց երկիրը:

Ինչպէս Բեռնարդոս մը յԱրեւմուտս, այնպէս Մովսէս յԱրեւելս ելաւ հրապարակ հնչեցնելու աւետարանական քարոզութիւնը քաղաքներու եւ գիւղերու մէջ, խորագանելու անկեալ բարբերը. եւ ինչպէս Գրիգոր Է. Լատերանու բարձունքէն, այնպէս Մովսէս Գ. Սիւնեաց բարձրագաւառէն բարձրացուց բազուկը նորոգելու Եկեղեցին ի գլուխս եւ յամբարան:

Հաստատուեցան քրիստոնէական կարգերը երկրին մէջ, գտաւ եկեղեցին իւր հեղինակութիւնը, լեռներն ու դաշտերը, հովիտներն ու անապատները կանանչացան, ծաղկեցան եւ պտղաբեր եղան:

ԱՂԲԻՐՆԵՐ

Աղեքսանդր կաթողիկոս ակնարկութիւններ ընելով Մովսէս կաթողիկոսի կեանքի եւ գործունէութեան վրայ կը գրէ. «որպէս գիտողացն է քաջայայտ ի Լիակատար պատմութեան իւրմէ՛ 1»: Այս գրութիւնը առանց տարակուսի Առաքել Դաւրիթեցւոյ Պատմութեան ԻԴ. գլուխը կ'ենթադրէ, որ ընդարձակօրէն կը ճառուի «վասն վարդապետութեան եւ կաթողիկոսութեան տեսան Մովսէսի՛ 2»:

1 Աղգասէր Արարատեան, 1849, Թ. 12, էջ 92: 2 Հրտ. Վաղարշապատ 1896, էջ 284—313:

Մովսէս կաթողիկոսի գործունէութեան մասին Գրքի Գոր Դարան աղցի իւր ժամանակագրութեան մէջ³, թէ իրրեւականատես եւ թէ իրրեւականալուր:

Ունինք տպագիր եւ ձեռագիր Յիշատակարաններու մէջ բազմաթիւ ակնարկութիւններ Մովսէս կաթողիկոսի կեանքի այլ եւ այլ շրջաններու նկատմամբ, որոնք կը ծառայեն կուսակցներ, ճշդելու ժամանակագրութիւնը: Բացի Յիշատակարաններէ հասած են մեզի Կոնգրակներ, Թուղթեր եւ Գանձեր ու Տաղեր, որոնք կամ Մովսէս կաթողիկոսէն գրուած են եւ կամ կը հային անոր գործունէութեան: Այս եւ նման ուղղակի եւ անուղղակի աղբիւրները պիտի յիշատակուին իրենց տեղերը:

Նոր եւ նորագոյն շրջանի պատմիչներէն յիշենք հոս.

Հ. Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց. Հատոր Գ, Վենետիկ 1786:

Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեան, Ազգապատմ., Հատոր Բ, Կ. Պոլիս 1915:


Այս հեղինակները խօսած են ընդարձակ Մովսէս կաթողիկոսի մասին, հետեւելով գլխաւորաբար Առաքել Դաւրիթեցոյ հաղորդած տեղեկութիւններուն:

1. ԾՆՈՒՆԿՆ ԵՒ ԱՌԱՋԻՆ ԿԵԱՆՔԸ ՄԻՆՁԵՒ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Սիւնեաց աշխարհի մէջ, Տաթևի հարաւակողմը, բարձրանիստ գիւղի վրայ կը յիշուի, սկսեալ ժ. դարէն, Սոտանան գիւղը, որ կը վերաբերէր Աճանան (Բաղք) գաւառին¹: Փոքրիկ եկեղեցի մը, նուիրուած Ս. Աստուածածնի², կը կազմէր անոր գլխաւոր դարը: Անուանի հանդիսացաւ գիւղս սկսեալ ժ. դարու վերջին քառորդէն, իրրեւ ծննդավայրը Մովսէս Գ. Կաթողիկոսի:

Ծնաւ Մովսէս իրր 1577ին³: Ծնողաց անունները չէ հասցուցած մեզի ժամանակը. կը յիշատակուի միայն քոյր մը, որուն միակ ծանօթ զաւակը՝ Մովսէսի «քեռորդին» եղաւ Գրիգորիս «կրօնաւոր բանասէրը», համան-

³ Հրատ. Երուսաղէմ 1915, էջ 287—301 եւ այլուր: ¹ Հմմտ. Հ. Ղ. Ալիշան, Սիւսական, էջ 277: ² Համաձեւեան, Յուլիան հայ. ձեռագրաց Գաղատիւ, թ. 35 (անտիպ): ³ Մովսէս վախճանեցաւ 1633, Մայիս 21ին իրր 55 տարեկան. Ձեռ. էջմ. 507: Ուրիշներ տարբեր կը նշանակեն «ի հասակի վաթսուն ամաց» (տե՛ս վարը):



մանն իւր մօրեղբոր «առաքինի եւ ճգնաղբեաց եւ խոտակրօն վարքովը»⁴:

Սոտանան գիւղի մէջ զարգացաւ Մովսէսի մանկութիւնը. մերձակայ մենաստանը, հոգեւորական Տաթև ձգեց իրեն նորահաս պատանին, որ սիրեց այնուհետեւ այն միանձնարանը, ուր Յովհաննէս Որոտնեցի, Գրիգոր Տաթևացի եւ Առաքեալ Սիւնեցի պայծառացած էին երբեմն: Հաւանօրէն հոս ընդունեցաւ անիկա, հնգետասանամեայ հասակի մէջ, քահանայական ձեռնադրութիւնը իրրեւ կուսակրօն արեղայ (Դաւր. 284):

Հաճելի էր անշուշտ նորընծայ արեղային ճգնաղբեաց կեանքը այն լեոնապատ առանձնարանին մէջ, բայց զգաց իր մէջ պահանջը, հոգեւոր յառաջադիմութեան հետ ունենալ մօթի լուսաւորութիւնը, զոր էջը կրնար տալ իրեն Տաթևը ժամանակակից հանդամանքներու մէջ: Այս լոյսի ի խնդիր տուաւ փոքրիկ արեղան հրաժեշտ Սիւսական աշխարհին. իջաւ Արարատեան դաշտ⁵, շարունակեց ճանապարհը մինչեւ Տիգրանակերտ (Ամիգ): Հոս համբաւուած էր նոյն շրջանին Սրապիոն Ուրհայեցոյ դպրոցը: Գտաւ առ ոտս Սրապիոն վարդապետի Գրիգոր Կեսարացին եւ Յովհաննէս Ուրհայեցին, եւ խոսնուեցաւ ինքն ալ անոնց թուին մէջ:

Գրիգոր երիցադոյն աշակերտներէն էր. 1595ին ստացաւ վարդապետական դաւադանն եւ հեռացաւ Վարդապետէն⁶: Մովսէս Յովհաննու հետ շարունակեց մնալ ուսուցչին ոտքը մինչեւ 1603, երբ Սրապիոն հրաւիրուեցաւ էջմիածին բազմելու Կաթողիկոսական գահը: Հաւանօրէն չհետեւեցաւ Մով-

⁴ Ձեռ. էջմ. թ. 1099: ⁵ Սիւսական կաթողիկոս Երեւանցի, Չամբու, Վարդապետ 1873, էջ 176, կը գրէ. «Նախապէս ի գեօզս Աշտարակ Մովսէս կաթողիկոսն առնու զայգի մի յԵրեւանցի Մուրատի դուստր Հատիկէն՝ հինգ թուամանի... ի թուին Տաճկաց ՌԳ»: Հիճրէ 1004 կը համապատասխանէ փրկչական 1595/96 տարւոյն: Եթէ ուղիղ է տրուած թուականը, պիտի հետեւեցնէր թէ Մովսէս արեղայ ձեռնադրուելէն ետքը ժամանակ մը անցուցած է Աշտարակ: Բայց կը հակասէ այս այն բարձրան, թէ Մովսէս աշակերտակից եղած ըլլալ Գրիգոր Կեսարացոյ:

⁶ Յակոբ Կեսարացի իւր Յիշատակարանին մէջ (Ձեռ. Վիեննայի թ. 593. հմմտ. Հանդ. Ամս. 1909, էջ 371—373): Դարանագրի (368) տառնց ժամանակը նշանակելու կը գրէ, թէ Կեսարացի «ժամանակ մի ապտամար եկաց ի նմանէ (Սրապիոն վարդապետէն) վստի իւր խոտակրանոց եւ գոտոյ բարուցն եւ սոյա յետոյ հնազանդեցաւ եւ կառ զաւագան ի նմանէ»: Կ. Պոլսոյ ավետին վրայ իրրեւ պատրիարք եւ վարդապետ:

սէս իւր ուսուցչին քայլերուն⁷: 1604 Դեկտեմբերին տեղահանուեցաւ եւ Ասպահան տեղափոխուեցաւ Արարատեան դաշտի ժողովուրդը. խաչի ճանապարհ մը ընթացաւ Սրապիոն. եւ 1605ին հրաժարելով ավետէն վերադարձաւ Ամիգ: Հոս առ ոտս իւր սիրեցեալ Ուսուցչին կը գտնենք փոքրիկ արեղան միւսանդամ. անիկա Տիգրանակերտ էր 1606 Ապրիլ 26ին, տակաւին «տհաս ուսմամբ եւ հասակաւ»⁸, երբ կը վախճանէր Սրապիոն. եւ լացաւ իւր մեծ Ուսուցչին մահը դառնաղի:

Սրապիոն նկատած էր յանձին իւր աշակերտին խոստմնալից աղաղայ մը. եւ խորհած էր նախահոգութեամբ յանձնել դաշտի Գրիգոր Կեսարացոյ խնամքին, պատուիրելով, որ հոգ տանի «ընդ փոյթ»⁹ տալ անոր վարդապետական իշխանութիւնը: Այս խնամքով կը գրէ Առաքել. «Բայց Սրապիոն վարդապետն մտօք նկատեալ իմանայր յոգի իւր, զի չնորհք աստուածային երեւի առ տէր Մովսէսն, ընդ որոյ ցաւակցաբար հոգաց զնա. վստի զի կոչեաց առ ինքն զաւագ աշակերտն եւ իւր զԿեսարացի Գրիգոր վարդապետն եւ յանձն արար նմա զտէր Մովսէսն ասելով. Յանձն առնեմ զսա քեզ, զի փոխանակ իմ հովուեալ պահեսցես զսա եւ հասուցեալ յարուան հասակի եւ վարդապետական ուսման. եւ տացես զգաւազան եւ զպատիւ վարդապետական. եւ եղիցի օրհնութիւն իմ ի վերայ քո եւ դորա» (էջ 284—285):

Սրապիոնի յանձնարարութիւնը կատարուած է հաւանօրէն թղթով. վստի զի Կեսարացին ներկայ էր գտնուած վարդապետին յուղարկաւորութեան: Իսկ Մովսէս իւր Ուսուցչին մահէն ետքը մեկնեցաւ Ուրհայ, ուր 1607ին, մարտ ամսոյն յօրինեց իւր Ողբն ի մահն Սրապիոնի: Ուրհայէն անցաւ աղա Կ. Պոլիս, ուր հասած էր Գրիգոր Կեսարացի 1608 Դեկտեմբերին, խաղաղեցնելու համար աղգայնոց մէջ ծաղած վէճ մը եւ ընտրուած այս երկրորդ անգամ — պատրիարք: Այս մասին ուշադրաւ է ինչ որ կը գրէ Կեսարացին իրրեւ պատասխան Ամթեցիներուն, որոնք հրաւիրած էին զինքը միւրթարելու:

Օրմանեան կը միտի այն կարծիքին, թէ Մովսէս առաջին անգամ էջմիածին ծանօթացած ըլլալ Սրապիոնի եւ աշակերտած. Ազգապատմ., Բ. 2318—2319:

⁷ Օրմանեան կը միտի այն կարծիքին, թէ Մովսէս առաջին անգամ էջմիածին ծանօթացած ըլլալ Սրապիոնի եւ աշակերտած. Ազգապատմ., Բ. 2318—2319: ⁸ Առ. Դաւրիթեցի, էջ 284: ⁹ Թոփեւեան, Յուլիան Ռ. Վ. Գաղեանի ձեռագրաց, Ա., էջ 69:

մահուամբ վարդապետին սգաւոր սրտերը¹⁰. «... Եւ ընդ օրհնութեանս ծանուցումն լիցի սիրելեացդ մերոց, զի յորժամ լուաք զբաւթալից համբան որ վստի խաւարման Արեւիկայ մերոյ, յայնժամ կամէաք առ ձեզ գալ, յողջագուրել զչլիւրիմ սուրբ նշխարաց նորա. եւ ի միւրթարել զորբացեալ որբիսդ նորա, բայց ոչ կարացաք գալ վստի դժուարութեան ճանապարհին, որ յաղագս ասպատակաց եւ աւագակաց: Այլ ողբերգական եւ միւրթարական թուղթս գրեցաք՝ երիս նամակս եւ առաքեցաք առ ձեզ թէպէտ ոչ կամեաք լազոյն, այլ դուղնաքայ. զի կամիմք մեք ինքնին գալ եւ միւրթար(ել) զձեզ, թէպէտ անմիւրթար է սուքն մեր: Բայց այժմ բազում պատգամաւորս եւ միջնորդս արկապետով, թէպէտ մեք ոչ կամեցաք զառաջինն, այլ սոքայ ժտելով ոչ միանգամ կամ երկիցս, այլ բազում անգամ առաքելով առ մեզ արսայլ հաւատարիմս հանդերձ ձեռագրովք կնքելովք յամենայն ժողովրդեն նոցա. եւ մեք տեսաք զձերմեռանդ սէրն եւ զկատարեալ զՂուան զՂերմեռանդ սէրն եւ զկատարեալ սոցայ: սոցա եւ ոչ կարացաք ընդդիմանալ սոցայ: Զի ես պատրաստեալ էի որ ձեռոս գայի ձեռքս այժմ ի Կոստանդնուպալսէ եկին առ մեզ վերստին հրաւիրակք յուժեղայոցն քան զառաջինն ստիպեն զմեզ զնալ առ նոսայ: զառաջինն ստիպեն զմեզ զնալ¹¹. բայց ոչ վստի որոյ կամ եղեւ մեզ զնալ¹². բայց ոչ վստի պատրիարքութեան, որպէս նոքայ կամ վստի հաշտութեան, որպէս ես կամիմ, այլ վստի հաշտութեան, որպէս ես կամիմ. ըստ Տեսուն թէ թող զպատարագն քո միմ. ըստ Տեսուն թէ թող զպատարագն քո ի վերայ սեղանոյն եւ երթ նախ հաշտեաց ընդ եղբարն: Եւ յետ այնորիկ գալ ի յԱմիգ: Մեր կամքն այս է որ զԱստուածածինն կամ զսուրբ Սաշն ի յԱմիգ առնեմք¹³, եթէ Տէր զսուրբ Սաշն ի յԱմիգ առնեմք: Ողջ լերուք ի կամեսցի եւ առաջնորդեսցէ: Ողջ լերուք ի Տէր»:

Այստեղ ի Կ. Պոլիս պատահեցաւ Մովսէսի (1609ի սկիզբները) Գրիգոր Դարանագրի, որ կը գրէ (էջ 130). «Յայնմ ժամանակին Մովսէս կաթողիկոսն ընդ նմա (Գր. նախին Մովսէս կաթողիկոսն ընդ նմա)»:

¹⁰ Ձեռ. էջմ. թ. 610, թղ. 169 ա—171 ա: ¹¹ Հմմտ. Գրիգոր Դարանագրի, էջ 115 եւ 117: ¹² Չամբու (Յակոբ) Նաղաշ(էն) հարցուկս եղէ, թէ ո՞ւր է. ասացին թէ ի Կեսարիա զրկեցին վէրջինն՝ զմեծ Գրիգոր վարդապետն ի բերել... Եւ յետ քանի մի սուրբ եկաւ Կեսարացին մեծաւ ամբոխի. եմուտ ի սուրբ եկաւ Կեսարացին մեծաւ ամբոխի. որպէս գաբիւղանդիկա աշեղագոջ եւ խորիստ կերպի որպէս գաբիւղանդիկա աշեղագոջ հայոց ազգն սարսեցին ի նմանէ. սիւժ, որ ամենայն Հայոց ազգն սարսեցին ի նմանէ. այս տեղի կ'ունենայ 1608 զեկտեմբերին: ¹³ Ուստի կը յուսար վերջացնել Կ. Պոլսոյ գործերը 1609 Օգոստոս—Սեպտեմբերին:

մէջ այսպիսի ծանօթագրութեամբ. Resposta della presente lettera mandata da un Vartabed detto Moise, già discepolo di Gregorio Vartabed con un potentato detto Aigas Armeno con li pi, che stanno al deserto.

(Թուղթ Մովսէս վարդապետի առ Գրիգոր վարդապետ Կեսարացի :)

«Աստուածային միացեալ անորոշ եւ լուսավայլ ճառագայթիւք տեսողականդ միշտ յարազուարճ բարերջանիկդ գործէ ահանատես ախտից ի բաց արտմականէն կրիցն, խոկման մահու դարձորժականն կրթեալդ սիրով եւ ոչ ընդհատդ ի վիրապէն ի մէջ աւճիցն. եւ քոյդ բազում սպրդողաց եւ սուտ եղբարց, Տէր երջանիկ հոգեորդ հոգւոյս ծնող վերերջանկացն Գրիգորի Կեսարացոյ ընկալ ողջոյն հոգեւոր որդւոյ քո նուստ Մովսէսէ բանի սպասաւոր :

Եւ զգիրազն քո ի սուրբ յաղօթն քո ապաստան եւ զիս առցես արժանի մասին յիշման :

Ծանուցումն լիցի սրբութեանդ կարճ ի կարճոյ, հայր իմ հոգեւոր, որ զքո հրամանուցդ զրեալ նամակներն վասն Աստուծոյ օրինացն եւ սուրբ հարցն կանոնաց Ասլանն⁶ երբ առ մեզ ի յԱնապատն աւգոստոսի իի: Ընթերցաք առաջի գլխաւոր կրանաւորացն, ոչ եթէ սակաւ եղեւ ողբումն, այլ իրրեւ դառուն հեղուին արտաւոր: Եւ ապա սուրբ Սաշին տօնին⁷ նաւակատիս եղեւ նորակերտ եկեղեցւոյ, զոր շինեալ է բարեպաշտ եւ աստուածատէր յիշխանն Հայկազ⁸ ի իւր սեփա-

⁶ Անշուշտ սա այն Ասլան զպիւրն է, որ 1611ին օրինակած է ի Կոստանդնուպոլիս ի ինչորոյ Յակոբ Բէօթահանցի եպիսկոպոսի Կանոնադիրք մը «սա ոտս Գրիգոր Կեսարացի պատրիարքի»: Յիշատակարանս ուղարկած է ինձ Բարզէն եպ. (այժմ կաթողիկոս) Կիւլիսէրեան 1908ին: Նոյն Ասլան զպիւրն գրչէն է նաեւ Վիեննայի Մխիթ., Թ. 386 (համա. Տաշեան՝ Յուլիան, էջ 840):

⁷ 10 Սեպտ. 1615:
⁸ Իշխան Հայկազնի գովութիւնը կը հիւսէ ներսէս Մովսէսի իւր ոտանաւոր գրութեան մէջ՝ ներքուցեան գովեստի չորեցունց արանցն որք եղեն սկիզբն անապատի կարգել. հրտ. Հայապատում, § 398: Սա որդին էր Հախնապարի. 1603 եւ 1604 տարիներուն պարսկ-օսմանեան կրիւններու ժամանակ իր ցոյց տուած քաջութիւններու համար Շահ Արաս «կացոյց զնա իշխան երկրի, հանեալ ի պատիւ մեծութեան, մեծարդոյ փառօք պատուեաց եւ կոչեաց զնա իւր սիրական»: Ըստ չափու իւր բազիլի քաջութեան էր նաեւ «նրբին մասամբ հոգւոյն երկիւզած եւ զգաստական, խոնարհ էր եւ հեզ բարոյք եւ սիրող աստուածայաչառութեան. անապատի սիւն լինէր եւ գրքգէր գրթով հայրական, մինչ յիշխանութեան միջին՝ ջանք զբնէր անապատական»: Չիմացուի որ Մովսէսն էր ոչ Մովսէս վարդապետի աղբերէն, թէ ո՛ր կը գանուէր

կան գիւղն. յերկրայժողով եղեւ. ամենեքեան ժողովեցանք՝ Պօղոս վարդապետ⁹ եւ Թուամա եպիսկոպոս¹⁰. Անապատէն, եւ այլ երկու եպիսկոպոսք Տաթեւու¹¹, զոր ոչ արժանի համարեմ անվան նոցա գրել ի թղթի աստ: Ո՞վ է պատճառս սոցա, եւ ոչ հերձուածողքն, զոր գանդատն քո գրեալ կայ. թողցուք զայս, զոր սրբութեան քում յայտնի է:

Վերուսացեալ վարդապետը եւ եպիսկոպոսը եւ քահանայք՝ բազումք, մեկիւր եւ տանուտերք եւ ժողովուրդք, որ եկեալ էին ի նաւակատիս եկեղեցւոյն. յորժամ կատարեցաք զօրհնութիւնն աղօթիւք սրբութեանդ անուշահոտ խնդաւք, լուցեալ կանթեղօք

Իշխան Հայկազնի գիւղն եւ ի՞նչ անուամբ. պէտք է ենթադրել Միւնիքի մէջ:
⁹ Պօղոս Վ. Մովսէսի, որ ետանդուն առաքելական գործունէութիւն ունեցաւ, եղաւ գլխաւոր նեցուկն եւ աշխատակիցը Մովսէս վարդապետին եւ վախճանեցաւ 1620ին: Իր վարքը կը պատմէ Առ. Դաւրիթեցի (էջ 266—283):
¹⁰ «Թովմայ եպիսկոպոս Տաթեւու, որ զինի եղեւ վարդապետ եւ զնայ յերկիրն Շամախու հովուել եւ առաջնորդել ժողովրդեան աշխարհին». Առ. Դաւրիթեցի, էջ 253, համա. է. 260: Ինքն է, որ 1617ին «տէր Սարգիսի ձեռք» կը ստանայ էջմ. 801 Հարանց վարքը եւ Դուկաս զրչի օրինակել կու տայ նոյն թուին Վիեննայի Թ. 168 Աւետարանը (Տաշեան՝ Յուլիան, էջ 482):

¹¹ Ասոնք են հաւանօրէն՝ Մեսրոպ եպիսկոպոս առաջնորդն Տաթեւու եւ Չաքարիս եպիսկոպոս Վայոց ձորոյ. առաջինը յաճախ կը յիշուի ժամանակակից յիշատակարաններու մէջ. յառաջ կը բերեմ Սաշատուր զրչի յիշատակարանը 1620էն. սա կ'օրինակէ Աւետարան մը «ի յերկիրն Դափանու ի գիւղն որ կոչի Տանձէվէր, ի գուռն Ս. Ստեփանոսի... ի հայրապետութիւն սուրբ ուխտիս ի տէր Մեսրոպ արհիէպիսկոպոսի, որ է առաջնորդ եւ քահանայապետ սուրբ ուխտիս Ստաթէի առաքելոյ վիճակին եւ թեմին: ... Յիշեցէք զիմ վարպետն զտէր Դաւրիթ եպիսկոպոսն, որ բազում աշխատանք եւ երախտք ունի ի վերայ մեր», Աւետարանի ստացիւն է տէր Յակոբ. Չեռ. էջմ. 293: ՉԴաւրիթ գովութեամբ կը յիշէ Առ. Դաւրիթեցի (էջ 253). «Եւ Դաւրիթ եպիսկոպոսն, որ ի Շամքոսու ձորէն եւ ի ցեղէն իշխանաց որ Դարամանեաց կոչեն. սա եւս եկեալ եկաց ի մեծ Անապատ. եւ ապա ելեալ զնայ ի ձորն Շամքոսու եւ անդ շինեաց անապատ, զոր կոչին Չարեքաղետի անապատ, որ է բազմաթոյով եղբարց բնակութիւն, եւ յոյժ հաստատուն ամենայն կարգօք եւ սահմանօք Անապատի մինչեւ ցայսօր: Եւ ինքն Դաւրիթ եպիսկոպոսն անդէն վախճանեցաւ եւ անդէն թողեցաւ»: Չաքարիս կը յիշուի 1619ին Դուկաս զարչէն, որ ի ինչորոյ Դազար քահանայի եւ Սարգիս եպիսկոպոսի (պարոնտիրոջ) կ'օրինակէ Ներսէս Կամբրոնացոյ Պատարազի Մեկնութիւնը «յերկիրն Որոտան, ի գեղս որ կոչի Գետաթաղ, ընդ հովանեաւ Չաղարոյց Ս. Աստուածածնի», յորդորմամբ «ամենեքեան Չարեքաղետի եւ մեծի Գլխոյն արճիական տեսան Չաքարիսի». Աճառան, Յուլիան, հոգեւոր գրք թարգմ. էջ 80—81. համա. է. 260. Եւ Թովմեան, էջ 51: Մեսրոպ եպիսկոպոս Սաշիկ վարդապետի, Բ. հակառակորդներէն եղաւ. բայց թէ ինչո՞ւ նաեւ Դաւրիթ անունը տալ արժանի չէ համարած Մովսէս, ինձ անբացատրելի է. թերեւս բացակայ էր նա:

պայծառացեալ մոմեղինօք, զարդարեալ կերպասիւք. իրքն յիշխանական էր. ոչ եթէ սակաւ լինէր արտաւոր եւ մխիթարութիւն, զի եթէ նշուլ ճրագի մի այսպէս է, ապա առաջին բոլոր արեգականց ժամանակն որպէս էր: Վա՛յ մեզ որ այնպիսի փոռացն զրկեալ կամք:

Դարձեալ երկրորդում աւուրն զմեզ ի ճաշ կոչեաց ամենեքումք. դեռ եւս խօսայ Ասլանն առ մեզ կայր նամակներովք: Յետճաշոյն նամակներն ի մէջ բերինք. Ազատպատու գիւղաքաղաքի աւագերնցն տէր Մովսէսն եկեալ էր ի նաւակատիս եկեղեցւոյն. հրամանք տուինք ընթեռնուլ առաջի յիշխանին, որ պատուիրեալ էիր: Յորժամ ընթեռնուր զպիւրն նամակը՝ յիշխանն խորոց սրտէ հառաչէր եւ արտաւոր հեղոյր եւ ինչք ու ապրանք եւ զգլուխն իւր ի մահ հրաւիրէր ստեղծով, թէ Արիւն իմ ընդ ձեզ եւ ընդ անապատաւորացդ խոռնեցի վասն հաւատոց եւ կրանից սուրբ հարցն:

Դարձեալ ասաց յիշխանն Հայկազ, թէ Սօջայ Նազարն տուաւ ունել զՄեկըիսէթն ի Շահոյն, զոր սպանել տայր¹². Ես աղաչեցի Սօջայ Նազարն որ եթող. զձեր խրատն չէի լսեալ: Այժմի(կ) Դաւրիթն այլ զնացեալ է ի Սպահան: Եւ Աւետարան կայ ի էջմիածինն եւ սպառնալով զգեցեալ. եւ մեզ սիրելութեան թուղթ տալիս զգեցեալ. որ մեր յերուսաղէմայ գաղն փոքր ի շատէ աստուածալախութիւն տեսաք ի նմա: Բայց Ասլանինանէ լսեցաք թէ ի հրաւիրանուց կողմանէ թուղթ է եղեր առաքել ի մանուց կողմանէ թուղթ է եղեր անապատի անկոստանդինուպոլիս. ես ոչ եմ իմացեր. անմեղազիր լիւր մեզ ի յայն կողմանէ:

Բայց այժմի խորհուրդ մեր այս է հետ Պօղոս վարդապետին եւ անապատաւորացն եւ բարեպաշտ յիշխանին Հայկազոյ, որ զնամբ ի Սպահան, քարոզեմք Ձուգայեցոյցն դատուածային բանն եւ սուրբ հարցն կանոնաց. այն սուտ կաթողիկոսքն կամ սիրով հրաժարայն անապատս մտանել, ապա թէ բուռն իշխանութեամբ ընդդիմանայ՝ մահացուցանել¹³ կամք լիցի՝ թէ Ձուգայեցիքն միարանին ընդ մեզ: Եւ այլ խորհուրդ բազում վասն Աստուծոյ օրինացն. եթէ հաճոյ է Քրիստոսի մերոյ, եղիցի աղօթիւք, ապա թէ՛ կամք Տեան:

¹² Հմմտ. Առ. Դաւրիթեցի, էջ 216—217:
¹³ Այսպէս յօրինակին: Սօջայն անշուշտ երկու կաթողիկոսներու իշխանութիւնը չեղբայցնելու մասին է. հմմտ. Դաւր. 218:

Դարձեալ Սողոմոն ոչ մոռացաւ զկտակն հօրն իւրոյ Դաւթի վասն Սիմէի. զիմ՞րդ ես մոռացայց զաւետարանն Քրիստոսի կամ զաքսորանք որ վասն օրինացս Աստուծոյ եղեւ: Ոչ է պարտ մեզ շատ խօսել, այլ զոր ինչ կամք Աստուծոյ իցէ, զնոյն առաջնորդեաց մեզ աղօթիւք սրբութեանդ: Ողջ լէր ի Տէր սրբութեամբ, Հայր իմ հոգեւոր:

Գրեցաւ ի թուին Հայոց ՌԿԴ. սեպտեմբեր ամսոյ ԺԹ. օրն երեքաբարթի:

Մօհօր յիշխանին
Տ. Կ.
Մօհօր Մովսէսին
Տ. Կ.

Մովսէս վարդապետի այս թղթէն կը տեսնուի յայտնապէս թէ ի՞նչ ծրագիրներ կը զբաղանջին զինքը: Առանց վախնալու աքսորէ կամ հալածանքէ նուիրուած էր քարոզչութեան, վերականգնելու Հայոց եկեղեցին ի գլուխն եւ յանդամս:

3. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ 1590—1626

Էջմիածնի կաթողիկոսական գահին վրայ 1590ին բարձրացած էր Դաւիթ Վաղարշապատեցի, երբ Արարատեան դաշտին վրայ կը ծածանէր օսմանեան մահիկը: Քաղաքական կեանքը աղմկալից էր հոն եւ մատուած զրեթէ անիշխանութեան: Ընթացեալն նուաճ զրեթէ անիշխանութեան օրերն էին: Ժողովուրդը ապստամբութեան օրերն էին: Ժողովուրդն եւ Եկեղեցին ենթարկուած էին վուրդն եւ Եկեղեցին ենթարկուած էին ապստամբներու հարստահարութիւններուն:

Դաւիթ անկարող զգալով ինք զինքը ժամանակակից զժողով հանգամանքներու մէջ կառավարելու ժողովուրդը, ընտրած էր անկառավարելու ժողովուրդը Մեկրիսեղի Գառնեթոսակից կաթողիկոս Մեկրիսեղի Գառնեթոսին (1593): Սա 1598ին նուիրակութեամբ ցին (1593): Պոլիս, ձգած էր ձեռք թաղահամայնի Կ. Պոլիս, ձգած էր ձեռք թաղաւորանիստ քաղաքին պատրիարքութիւնը (1598—1600):

Հաւանօրէն այս միջոցին հրաւիրեց Դաւիթ իրեն աթոռակից՝ Աւետիս Միրզայի որդին, որ առաջին անգամ 1601ին կը յիշուի պատմութեան մէջ: Սա թէեւ իրրեւ «ստաքիին» անձնաւորութիւն կը գովուի ժամանակակիցներէ, բայց չի հանդիսանար ժամանակի ազատի զիմադրաւոր գործիչ մը:

1601ին վերադարձաւ Մեկրիսեղի Երեւան: Երեք կաթողիկոսներ հաւասարապէս

յանձն առաւ ոչ միայն 300 թուաման տուգանքը վճարել, այլ եւ պատրաստ ընծայեց ինք զինքը իշխանութեան տիրանալու համար ամ յամէ վճարել արքունի դանձարանին յանուն Էջմիածնի Աթոռին 100 թուաման. որով հաճոյացաւ արծաթասէր Շահին եւ ապահովեց իրեն Աթոռը: Այս յանձնառութիւնը սակայն ստեղծեց սարսափելի կացութիւն մը նոյն իսկ Մելքիսեղի համար: Որպէս զի ապահովութեամբ դանձուի այս տուրքը, Շահը նշանակած էր կաթողիկոսին վրայ հսկող չորս պարսիկ «զուլեր», որոնք կաթողիկոսին հետ պիտի չըջէին եւ անոր հաշուին պիտի պարենաւորուէին: Ասոր հետեւանքն եղաւ, որ ոչ միայն անհարին եղաւ տարեկան 100 թուամանը հանգանակել, այլ եւ նոր պահանջներ ծագեցան յիշեալ չորս «զուլերու» պիտոյքը գոհացնելու համար: «Այս եղև բեռն ծանր եւ լուծ տաժանելի եւ անուր անխղելի ի վերայ սրբոյ Աթոռոյն Էջմիածնի ի դուր եւ ի տարապարտուց. եւ ամենայն աղին Հայկայ սուգ անմխիթար եւ տրտմութիւն անփարատելի՝ Եկեղեցականաց եւ աշխարհականաց» կը գրէ Դաւրիթեցի (221/22):

Կաթողիկոսին սովորական հասոյթները բաւական չէին ծածկելու համար իր անձին, չըջակայ եպիսկոպոսներու եւ զուլերու ծախքերը, թող թէ վճարելու արքունի 100 թուաման տուրքը: Պարտքերը բարդուեցան: Հաւատացեալները «սրտով լքին զկաթողիկոսն եւ զիւրսն եւ ի բաց կացին ի նոցունց»⁴: ձնչուած պարտքերէն՝ ձեռք առաւ Մելքիսեղ բռնական միջոցներ. 1. «զարս անպարսս, եթէ եպիսկոպոս լինէր, եթէ արեղայ, եթէ երէց, եթէ աշխարհական կալեալ գնոսա... պահանջէր դրամ եւ մասնէր ի ձեռս զինուորաց զուլերոյն, որք կախեալ յոտիցն եւ բրածեծ առնէին, մինչեւ ըստ կամաց իւրեանց առնուին դրամս եւ ապա արձակէին». 2. կաշառքով կը ձեռնադրէր եպիսկոպոս կամ քահանայ. կամ մէկ վանքին սեպհական հողը կ'անցնէր ուրիշ վանքին. կ'արտօնէր չհասամունութիւններ, ամուսնալուծութիւններ, կրկնամուսնութիւններ եւն. 3. ի վերջոյ սկսան «այլազգեաց իշխանութեամբ եւ իբր զարալուոր հարկատու բառնալ ի վերայ ժողովրդեան եւ առանց իրաւանց կեղեքեալ կո-

ղովտէին զժողովուրդան» (Դաւր. 223—224): Բայց դարձեալ հնարաւոր չեղաւ ոչ արքունի տուրքն տալ եւ ոչ իրենց սեպհական պէտքերն գոհացնել:

Անել դրութեան առջեւ յուսահատ՝ որոշեց Մելքիսեղեկ 1624ին փոխանցել կաթողիկոսական իշխանութիւնը իւր եղբորորդւոյն՝ Սահակ Գառնեցւոյն եւ փախչիլ արտասահման: Ձեռնադրեց զՍահակ կաթողիկոս, յայտնեց թղթով մը Շահին, թէ Աթոռը պարտքերուն հետ փոխանցուած է Սահակին. իսկ ինքը ընկերակցութեամբ երկու եպիսկոպոսի անցաւ Օսմանեան սահմանը եւ Կարին-Կոստանդնուպոլիս գծով հասաւ Կամենից ի Լեհս, ուր եւ վախճանեցաւ 1626, Մարտ 18ին (= հ. տ. Մարտ 27), տխուր յիշատակ մը ձգելով պատմութեան մէջ:

Ստեփանոս Ռոչքա իւր Տարեգրքին մէջ կը գրէ թէ Մելքիսեղեկ 1626, Մարտ 14ին ի Կամենից «առնէ զկտակ», որով «զաթոռն Էջմիածնի յանձնէ Իսահակ կաթողիկոսին՝ եղբորորդւոյ իւրում եւ վճարէ զկեանս իւր ի մարտի 18. եւ թաղի յորմն եկեղեցւոյն Աւետման Ս. Աստուածածնին, զոր ինքն էր սրբազործեալ, ըստ կոնդակի իւրում»⁵: Բայց եւ այնպէս Ազգը չճանչցաւ զՍահակ. այնպէս որ զեռ երկու տարի ետքը, 1628, Յունուար 25ին Յակոբ Թոխաթեցի ի Չամոսցա կը գրէր իւր Սաղմոսարանն տաղաչափեալ «ի ժամանակս յայս կաթողիկոս ի Ս. Էջմիածին ոչ գիտեմք թէ ով ով է. վասն զի յանցեալ ամի, որ էր թւականն Հայոց ՌՉԶ վախճան ընկալաւ տէր Մելքիսեղ կաթողիկոսն ի Կամենից»⁶: Այսպէս անձանօթ է օրուան կաթողիկոսին նաեւ Սրապիտոն Բարերդացի գեռ 1629ին ի Սեչով, ուր Յայտմաւուրք մը կ'օրինակէ⁷:

4. ՔԱՐՈՉԻՉԸ

Վերին Հայաստան, ուր պիտի ըլլար Մովսէս վարդապետի առաքելական գործունէութեան ասպարէզը, բազմօք խախտած էին հին կարգերը. լուծ էր աւետարանական քարտուղիները. վանքերը ամայացած էին, եկեղեցիները շատ տեղեր լքուած. եկեղեցակառուութիւնը զուրկ էր պատշաճաւոր կրթութենէ եւ կ'ապրէր սանձարձակ. մուտ գտած

⁵ Կամենից, էջ 137:
⁶ Անդ, էջ. 179:
⁷ Անդ, էջ 181—182:

⁴ «Ամենայն երկրին ատելի եղև եւ արկին յեղեաց եւ մէկ պատաս հացի տարց արժանի ոչ համարեցաւ». Գր. Դարանագրի, էջ 297:

էին ժողովրդեան մէջ ալ եկեղեցական կանոններու հակառակ զեղծումներ: Առաքել Դաւրիթեցի լալով կը նկարագրէ երկրին եւ եկեղեցւոյ տխուր պայմանները: Բաւական է արձանագրել հոս ինչ որ կը գրէ 1650ին յիշատակագիր մը¹.

«Ընդ այս ժամանակս բնաւին բարձեալ էր վարդապետ անուն յարեւելեան աշխարհէ. րայց եթէ կային եպիսկոպոսք, էին արժանի բամբասանաց, գնալով արտաքոյ կրօնից իւրեանց: Վասն որոյ բնաւին խոպանացեալ էին մարդիկ ի գիտութենէ եւ ի դործոց. իսկ առաքելաչորս այրս այս Մովսէս, իբրեւ էարկ սերմն կենաց ի տունս արեւելեան, իսկոյն արմատացաւ, աճեաց եւ ետ պտուղ բազմապատիկ...»:

Թէպէտ ժողովուրդը յօժարութեամբ կ'ունկնդրէր քարոզչին եւ կը հետեւէր անոր խրատներուն, բայց «եպիսկոպոսք դաւառաց եւ արեղայք վանօրէից ոչ հաճէին ի քարոզութիւնն Մովսիսի», վասն զի Մովսէս վարդապետ ինչպէս ինքը մերկ էր ամէն աշխարհիկ իրերէ եւ կ'ապրէր «պահօք եւ սրբութեամբ եւ կրօնաւորական վարուք ըստ հրամանաց դրոց», նոյնպէս կը քարոզէր, թէ մանաց զրոյց», նոյնպէս կը քարոզէր, թէ պէտք է ըլլան բոլոր վանականներն ու եկեղեցականները. իսկ անոնք «անգոսնեալ զբանս նորա՝ ոչ ընկալան» (Առ. 288):

«Վանօրէից արեղայքն, կը գրէ Դարանագրի, որ ամէնքն առ հասարակ սուտ եպիսկոպոսք էին եղեալ վասն միմեանց նախանձու եւ ոչ վասն այլ իրիք՝ ի սուտ անուն կաթողիկոսացն, եւ թողեալ էին զլուսազարդ վանորայսն, սիրեալ էին ի զեղորայսն եւ անդեայք եւ այլիք եւ բուրաստանք եւ հօտք խաչանց եւ արջառոց բազմութիւնս ստացեալ էին եւ եղեալ էին իբրեւ զմի ի մեծատանց աշխարհականացն եւ կալեալ էին ի կանանց տանտիկնայս ի վարձու եւ զանուանքն հացթուխ էին եղեալ... եւ զայս ամենայն անկարգութիւնս, զոր գրեցի ի վերոյ, եւ ինչքէն ալանատես իսկ եղէ... Զայս ամենայն, ձէն ասացի եւ գրեցի, մին մին խափանել զոր ասացի եւ գրեցի, մին մին խափանել ջանայր (Մովսէս) եւ հանել բռնութեամբ ի զեղորէիցն եւ յափշտակել տայր բռնաւորացն զեղորէիցն եւ զայգիս նոցա եւ զամենայն կարտ եւ զայգիս նոցա եւ զամենայն կառուածս եւ զտունս նոցա յաւարի տայր առնել եւ զիւրեանքն բռնութեամբ բերէր ի

¹ Ձեռ. էջմ. 2309. Հմմտ. Արարատ, 1902, էջ 436:

կարգս խստակրօնս մուծանէր: Եւ շատք ոմանք ի կաթողիկոս Մելքին ապաւինելով ոչ կամէին ելանել ի տեղովէ իւրեանց եւ ի կալուածոցն հրաժարել: Տակաւին վարդապետ գոլով առնէր զայս (Մովսէս)» (էջ 296—297):

Մովսէս իրեն եռանդուն օգնական գտաւ յանձին Պօղոս Վ. Մոկացւոյ, որ իբմէ յառաջ արդէն կը շրջէր քարոզութեամբ եւ շինարարութեամբ. զինքը տեսանք 1615ին, որ եկած էր ի նաւակատիս Եկեղեցւոյ: Առաքել Դաւրիթեցի (291) կը գրէ. «Իսկ երկուքն վարդապետքն՝ Մովսէս եւ Պօղոս եղեն իրերաց ընկերք իբրեւ գտուրբ առաքեալսն Պետրոս եւ Պօղոս, լեալք ամուրք հաւատոյ՝ շրջեալ յամենայն դաւառս արեւելեայ աշխարհս, քարոզէին ամենեցուն զճշմարտութիւն, շինէին զեկեղեցիս, կարգէին քահանայս, հաստատէին զպրոցս, ուսուցանէին մանկունս, վասն զի առաքելաբար շրջէին հետիոտս գնալով, ոչինչ առնուին յումեքէ, այլ միայն զկերակուրս, եւ զբոլոր շարաքն պահէին»:

Անոնք կը քարոզէին պարզ կեանք, աստուածադիր պատուիրաններու եւ եկեղեցական կանոններու հպատակութիւն, կը ձագէտին ամէն զեղծում եւ երկրապաշտ կենցաղ: Կը կանդնէին եկեղեցիներ, կը նորոգէին աւերակ տաճարները, կը հաստատէին հոն ժամատարները, կը բանային դպրոցներ, կը հաւաքէին աշակերտութիւն եւ անձամբ կամ իրենց ձեռքի տակ կրթուած ուսուցչութեամբ կ'ուսուցանէին մանկանց: Կը դասաւանդուէր կանոնաւոր ժամակարգութեան եւ ժամասացութեան կերպը. լուծեան մասնուած տաճարները կը սկսէին միւսանգամ թնդալ սաղմոսերգութեամբ: Գրքերը, որոնք վախուած մոսերգութեամբ: Գրքերը, որոնք վախուած էին երկար տարիներէ ի վեր, կը բացուէին, կը մեկնուէին եւ դաստիարակները կ'ըլլային նոր սերունդին:

Յիշատակագիր մը կ'արձանագրէ այս շրջանէն, ի Դաւրիթ, Հարանց վարքի վերջը. «Բայց գոհանամ զԱստուծոյ, որ այսպիսի ժամանակիս Անպատ հաստատեցաւ եւ երկու մեծ վարդապետ աստուածակոյս կողմէն ետ մեզ Աստուած՝ Մովսէս եւ Պօղոս, մանկ ետ մեզ Աստուած՝ Մովսէս եւ Պօղոս, որ խիստ յօժար եւ փափաք էին եկեղեցի շինելն, զպրատուն հաստատիլն եւ ուսուցանելն... եւ հոգեւոր հայրն իմ յԱզուլիս դպրատուն շինեաց եւ յիսունեւօթնէն աւելի

